

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	82.	«Նախադպրոցական կրթության զարգացման 2016-2025 թվականների ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը ՀՀ ԿԳ նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 9-ի N 01/07.2/12032-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:	
	83.	«Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը ՀՀ ԿԳ նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N 01/14/13472-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:	
	84.	«Նախնական մասնագիտական (արհեստագործա-կան) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N1139-Ն որոշում	
	85.	«Ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը	Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը և 21-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ	

1	2	3	4	5
	86.	<p>«ՀՀ կառավարություն ներկայացնելը</p> <p>«Դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը</p>	<p>կետը՝ 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 01/06.1/14306-15 գրությամբ ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 02/14.1/22219-15 գրությամբ ՀՀ կառավարությունը հանձնարարել է նշյալ նախագծի մի շարք դրույթներ խմբագրել՝ դրանք համապատասխանեցնելով 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով հաստատված ՀՀ Սահմանադրության դրույթներին:</p>	

**ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Կարծիք
1	2	3	4	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	50.	Կրթության հասանելիության և որակի բարելավում	<p><u>1. Նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնում.</u></p> <p>1) ՀՀ մարզերում շուրջ 25 նախակրթարանի հիմնում՝ առնվազն 550 երեխայի ընդգրկմամբ «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում ավարտվել են նախադպրոցական կրթության նոր նախակրթարանների հիմնման աշխատանքները ՀՀ Կոտայքի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի 33 հաստատություններում:</p> <p><u>2. Հանրակրթության որակի և մատչելիության բարձրացում.</u></p> <p>1) «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Քիմիա»</p>	

1	2	3	4	
			<p>և «Ֆիզիկա» և բնագիտական առարկաների գծով հայալեզու էլեկտրոնային կրթական ռեսուրսների մշակում (ընդհանուր առմամբ 8 անուն) և ներդնում միջին և ավագ դպրոցներում.</p> <p>«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ավարտվել է «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաների էլեկտրոնային կրթական նյութերի ստեղծումը: Էլեկտրոնային կրթական նյութերը հասանելի են «<a href="http://esource.armedu.am/">http://esource.armedu.am/</a>» հասցեով և 2016 թվականի հունվարից հասանելի կլինեն ՀՀ բոլոր դպրոցներին:</p> <p>2) «Պատանի երկրապահ» ակումբների ստեղծում առնվազն 100 հանրակրթական ուսումնական հաստատություններում.</p> <p>ՀՀ բոլոր դպրոցներում ձևավորվել են պատանի երկրապահների ակումբներ:</p> <p>3) ռոբոտատեխնիկայի խմբակների ստեղծում 47 հանրակրթական ուսումնական հաստատություններում</p> <p>Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման նպատակով հանրապետության 47 հանրակրթական ուսումնական հաստատություններում ստեղծվել են ռոբոտտեխնիկայի խմբակներ:</p> <p>4) «Ազգային երգ ու պար» առարկայի ներդնում հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-րդ դասարաններում.</p> <p>2015-2016 ուսումնական տարվանից ՀՀ ևս 100 հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-րդ դասարանում ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան (50-ը Երևանում, 50-ը՝ մարզերում):</p>	

1	2	3	4	
			<p>Հաստատվել է նաև «Ազգային երգ ու պար» առարկայի 6-րդ դասարանի ծրագիրը: 2016-2017 ուսումնական տարվանից սկսած հանրապետության 1-2 մարզերի բոլոր դպրոցներում կներդրվի «Ազգային երգ ու պար» առարկան:</p> <p>5) 107 ավագ դպրոցների դպրոցական գույքով վերազինում.</p> <p>107 ավագ դպրոցներին նոր գույք տրամադրելու գործընթացը ավարտվել է:</p> <p>6) կրթության գերազանցության ազգային ծրագրի մշակում և ներդրում.</p> <p>Ծրագրի նախագիծը գտնվում է հանրային քննարկման փուլում: Քննարկումների արդյունքում կատարված առաջարկությունների հիման վրա ծրագիրը կամբողջացվի:</p> <p>3. <u>Ազգային փոքրամասնությունների երեխաների համար որակյալ կրթություն ստանալու հնարավորության ընդլայնում.</u></p> <p>1) 2 անուն դասագրքերի վերահրատարակում եզդիերենով,</p> <p>ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վերահրատարակվել են «Եզդիերեն Այբբենարան», «Եզդիերեն» 2, «Եզդիերեն» 8, «Եզդիերեն» 12 և «Եզդիերեն» 1-12 ծրագրերը, «Քրդերեն» 8, «Քրդերեն» 9 և «Քրդերեն քերականություն» 5-9 դասագրքերը: Հրատարակիչները դասագրքերը տրամադրել են շահառուներին:</p> <p>2) հանրակրթական դպրոցների հուներեն և ասորերեն դասավանդող շուրջ 20 ուսուցչի վերապատրաստում</p>	

1	2	3	4	
			<p>Կազմակերպել և անցկացրել է հանրակրթական դպրոցների ասորերեն դասավանդող 7 ուսուցիչների 18-ժամյա վերապատրաստման դասընթացներ:</p>	
	51.	<p>Հայաստանի Հանրապետությունում շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության անցկացում</p>	<p>1) շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության անցկացման նպատակով կազմկոմիտեի ձևավորում  2) ուղեկցող անձնակազմի վերապատրաստում  3) Երևան քաղաք ժամանած մարզիկների և մարզիչների այցելությունների կազմակերպում ՀՀ պարմամշակութային վայրեր  2015թ հոկտեմբերի 6-12-ը Երևանում կազմակերպվել է շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնությունը: Շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնությանը մասնակցել են Եվրոպական 9 երկրների 18 համալսարանների 25 թիմեր՝ ընդհանուր թվով 82 պատվիրակ: Թիմային պայքարում առաջին տեղը գրավել է «Ռուսաստանի Ուրալի պետական համալսարանի» թիմը, երկրորդ տեղը գրավել է՝ «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի» թիմը և երրորդ տեղը գրավել է «Լեհաստանի՝ Վարշավայի պետական համալսարանի» թիմը:</p>	
	52.	<p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացում</p>	<p>1. <u>Համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում</u>  - պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով նախորդ տարիներին կրթություն ստացած անձանց պետական նմուշի դիպլոմ ստանալու համար պետական ամփոփիչ արեստրակտորման քննությունների կազմակերպման կարգի մշակում և հաստատում  «Պետական հավատարմագրում չունեցող միջին</p>	

1	2	3	4	
			<p>մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգ»-ի համաձայն անցկացվել են պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունները: Քննություններին մասնակցելու թույլտվություն է ստացել 25 շրջանավարտ, որից 17-ը ստացել է պետական նմուշի դիպլոմ:</p> <p>- <i>արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շուրջ 50 տնօրենի և հավակնորդների վերապատրաստում և հավաստագրում</i></p> <p>Սահմանված կարգով անցկացվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման գործընթացը: Հաստատվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրված անձանց ցուցակը: Հավաստագրմանը մասնակցել են 58 անձ, որից 55-ը ստացել են ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):</p> <p><u>2. Արհեստագործական ուսումնարանների տեխնիկական վերազինում.</u></p> <p>- <i>5 արհեստագործական (ՄԿՈԻ) ուսումնարանների համարում ժամանակակից ուսուցման սարքավորումներով.</i></p>	

1	2	3	4	
			<p>Ուսումնական հաստատություններին սարքավորումներ և գույք տրամադրելու նպատակով մշակվել են նյութատեխնիկական բազայի 17 չափաբաժնի համար տեխնիկական բնութագրերը: 10 չափաբաժնով գնման մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, որից 8 չափաբաժինների մասով սարքավորումները ամբողջությամբ տեղադրվել են: Մնացած 2 չափաբաժինները պայմանագրերում նշված ժամկետում չմատակարարելու կապակցությամբ և դրանից բխող այլ խնդիրների ծագման պատճառով, ՀՀ ԿԳ նախարարության կողմից միակողմանի լուծվել է համապատասխան պայմանագրերը: 7 չափաբաժնով 2015թ. հոկտեմբեր ամսին հայտարարված կրկնակի մրցույթը չի կայացել հայտ չլինելու պատճառով: ՀՀ ԿԳ նախարարությունը 2015թ. հոկտեմբերի 28-ի N01/19.3/13612-15 գրությամբ առաջարկ է ներկայացրել ՀՀ կառավարություն նշված 7 չափաբաժինների համար նախատեսված ֆինանսավորումը 2016թ. տեղափոխելու վերաբերյալ:</p>	
	53.	Բոլոնիայի գործընթացի սկզբունքների շարունակական ներդրմամբ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հետագա զարգացում	<p>3) <i>սոցիալական խոցելի խմբերին ուղղված ուսման վարձի փոխհատուցման մեխանիզմների վերանայում</i>  Բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանում սովորող 719 առաջին կուրսեցիների պետության կողմից հատկացվել է ուսման վարձավճարի 50-100% չափով փոխհատուցում՝ որը կազմել է 496.710.220 դրամ: 2015-2016 ուսումնական տարում բակալավրի կրթական աստիճանում ընդրկվել է 1379 ուսանող՝ 306.941.920 դրամ ուսման վարձի փոխհատուցման չափով: Մագիստրոսի կրթական աստիճանում փոխհատուցվել է 52 ուսանողների ուսման վարձը:</p> <p>4) <i>առնվազն մեկ բարձրագույն ուսումնական</i></p>	

1	2	3	4	
			<p><i>հաստատության վերակազմակերպում՝ հիմնադրամի ՀՀ պետական 16 բուհերից 5-ը ունեն «Հիմնադրամի» կարգավիճակ: 2015թ. դեկտեմբերի 10-ին N01/12/14880-15 գրությամբ ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» որոշման նախագիծը:</i></p> <p><i>5) մասնագիտությունների ցանկից բխող համապատասխան կրթական աստիճաններով ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկի հաստատման նպատակով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունները ներկայացրել են համապատասխան կրթական ծրագրեր, որոնք քննարկվելուց և ամփոփվելուց հետո հաստատվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի N647-Ա/Ք հրամանով:</i></p>	
	54.	Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնում	<p><i>- Հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին սննդով ապահովման ծրագրի իրականացում ՀՀ Արարատի մարզում (շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 14062 երեխա):</i></p> <p>2015 թվականին ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի բոլոր հանրակրթական դպրոցների</p>	



1	2	3	4	
			տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է դպրոցական նախաճաշ՝ յուրաքանչյուր երեխային օրական 140 դրամ հաշվարկով: Ծրագրում ընդգրկված են 22056 աշակերտներ, որից 2386-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, 6052-ը՝ ՀՀ Սյունիքի մարզ, 13618-ը՝ ՀՀ Արարատի մարզ:	